

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Կ Ո Յ Մ Ա Ն Ն Ե Ր
Տարեկան 8 Ձր.
Վեցամսեայ 4 Ձր.
ԱՐՏԱՍՈՒՄԱՆ
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 Ձր.
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2 Տօլ.
Վեցամսեայ 1 Տօլ.
Կ Ա Ն Խ Ի Կ
ԽԱՆՈՒՅՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԼԵ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Pere G. Kalemkarian Michitaris
tengasce № 4
Vienne



Հ Ո Ս Ե
Action du Journal
„Ira vounk“
Varna
Редакция на
Вѣстникъ
„Правункъ“
Варна
Գրողները եւս չեն
տխուր

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՍՂԱՂՈՒԹԻՒՆ

Սթոքհոլմի մէջ վերջերս գումարած համաշխարհային խաղաղութեան համաժողովը իտալացի պատգամաւորներին մը առաջարկութեամբ որոշեց հրապարակել կոչ մը հիմնելու համար խաղաղութեան երիտասարդութեան համաշխարհային գաղտնիկութիւն մը:

Ահա այդ կոչը զոր ստորագրած են բոլոր ազգութիւններու ներկայացուցիչները, որոնք գաղտնաւոր ձեւով էին այդ գոնկութիւնը:

Այս տարուան օգոստոս—Սեպտեմբերի մէջ գումարուած խաղաղութեան համաշխարհային ժընթակերթը միաձայնութեամբ հետեւեալ որոշումը տուաւ զոր բարեազգութիւնը ունինք հաշտութիւնը:

Վոնկերթը մեծ հաճոյքով իմացաւ այն արդիւնքը, որ ձեռք է բերուած իտալիոյ մէջ դպրոցական երիտասարդութեան մէջ եկած բարեակամութիւնը, որ քիչ ժամանակէ համախմբել է 4000 նորահաս աղջիկներ խաղաղասէր ընկերութեան մը մէջ:

Վոնկերթը կողմնէն նորոգեց Պէլճիոյ մէջ պատանեկան ընկերութեան մը ստեղծումը՝ ու կը կոչուի Վէլճիոյ խաղաղասիրաց ակումբը:

Վոնկերթը կը յանձնարարէ միջազգային ուսուցման և խաղաղասիրական դաստիարակութեան միջոցով յանաւոր դաստիարակութեան միջոցով, որ զանազան երկիրներու մէջ ստեղծուին նորոգման ընկերութիւններ և դաշնակից ընել զանոնք իրարու:

Խաղաղութեան բոլոր կուսակիցները և այդ փրկարար սկիւբունքի յառաջդիմութեան ուստարածման բազմազանները կը հաստատեն թէ խաղաղասիրութեան կրթութիւնը պէտք է սկսի պատանեկութեան տարիքի մէջ դպրոցական շրջաններէն:

Այս ոգևոր սկսած են շահերը իրար զարգացեալ ազգերու մէջ և կոչեր ուղղուիլ ամէն կողմ:

Դժբաղդապէս մեր ինքնակոչ ազատականները կամ յեղափոխականները ու մարդասէր ընկերփարականները աւելի խռովութեան, րմոստացումի և դատարկային կռիւի որոմներ կը ցանեն մեր մատաղ սերունդին մէջ դպրոցական շրջանէն սկսած և ահա այդ շնորհիւ աշակերտը վարժագետին դէմ, հոգաբարձուին դէմ և վերջապէս ազգային իշխանութեան դէմ կը լարուի և այդ լարուած դրութեան հետեւանքը կ'ըլլայ այն խռովեալ վիճակը որ այսօր կը տիրէ մեր ազգին մէջ:

Մինչ եւրոպայի խաղաղասէրներու համաժողովը կոչ կ'ընէ որ դպրոցներէն սկսեալ մտտաղ սերունդին մէջ խաղաղասիրութիւնը ծաւալելու ու զարգացնելու նպատակաւ ընկերութիւններ կազմուին և բարեակամութիւնը մենք Հայերս կ'ստիպուինք այսօր արդիւն դպրոցական աշակերտներու մէջ ընկերութեանց կազմութիւնը, պարզապէս առաջը առնելու համար խռովալուծութեանց ի հարկէ ստիպեալ զրկանք մըն է այս, որուն պատասխանատուն ենք են անոնք որոնք իրենց բան գործ բրած են ժողովուրդեան տգէտ և անգիտակ խաւերը շահագործելու, օգտուելու համար անոնց միամիտ և դիւրահաւան վիճակէն, մեղմ գանձք մինչև եղբայրասպանութիւն:

Յ. ՊՈՒԼԿԱՐԻ

ԿԵՂԻՐՈՆԻ ԽՈՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՀԻՄՆԱԳԻՐԸ

Արդէն ընդհանուր կերպով ընդունուած է խորհրդարանական շինիչ (ոչ թէ քանդիչ) կուսակցութիւններու օգտակարութիւնը: Մեր Ազգ. Երեսփ. Ժողովը ալ վերջերս ունեցաւ իր պատուարներ մէկ որոշ կուսակցութիւնը «Կեղիւրի Խորակցութիւն» անունով:

որ կոչուած է փրկարար դեր մը կատարելու, ազգային գործերուն լաւ և լուրջ ուղղութիւն մը տալով և տոհմային հաստատութիւնները և նուիրական աւանդութիւնները պաշտպանելով արտաքին ու ներքին ոտնձգութեանց դէմ:

Ահա այդ կուսակցութեան Հիմնադիրը, որ կը պարզէ իր հետեւելիք ուղղութիւնը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԿՁՔՈՒՆԷՐ

Կեղիւրի Խորակցութեան բովանդակ գործունէութիւնը կէտ նը պատակի պիտի ունենայ յետագայ սկզբունքներուն իրագործումը:

Ա. Բարձրացում. Հայ ժողովուրդին բարոյական և մտեւորական մակարդակին՝ խաղաղ բնականոն զարգացումի պայմաններով:

Բ. Անվճար պահպանում ազգային Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւանց և առանձնաշնորհումներուն:

Գ. Տարբեր դասանանքի պատկանող Հայ Հասարակութեանց հետ ազգային համեմատութեան ամրապնդում և կրթական գետնի վրայ ընդհանուր գործակցութիւն:

Դ. Անվճար գործադրութիւն ներկայ Ազգ. Օսմանադրութեան իսկ վերաբնութեան պատեհ առիթին՝ հիմնուիլ յետագայ ըսկզբունքներուն վրայ:

1. — Ժողովուրդեան ձայնին ընդարձակութիւն, պարտքի և իրաւունքի հիման վրայ ընտրողութեան տարիքը իջեցնելով 21-ի:

2. — Գաւառական վարչութեանց գործունէութեան վերաբերմամբ ընդլայնում ապակեզրոնացման դրութեան, պահելով միշտ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ հեղինակութիւնը իբրև օրէնսդիր մարմին:

3. — Եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան մէջ նկատառում ժողովրդեան ձայնին:

4. — Երեսփոխանական աթոռներու համեմատական բաշխում և Պոլսոյ և գաւառներու վրայ:

ԿՐՈՆԱԿԱՆ

Ե. — Անեղծ պահպանութիւն Ս. Էջմիածնայ Ընդհանուր Հայրապետութեան:

պետութեան և իր իրաւունքներուն:

Չ. — Կաթողիկոսական Դիւանութիւններուն հետ համեմատական խաղաղութեան պահպանում և ճշգրտութիւն օրինագրով մը:

Է. — Վանդակից վերակազմութիւն և բարեկարգութիւն, իրապէս ծառայեցնելու համար զանոնք ազգային կրօնական և կրթական արդի պահանջանք:

Ը. — Եկեղեցական բարեկարգութիւն հետեւելով ժամանակիս ոգևորչին:

Թ. — Բարձրացում մտեւորացեալ եկեղեցականութեան վիճակին և դիրքին, համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ դրութեանց:

ԿՐԹԱԿԱՆ

Ժ. — Կազմութիւն յոր և ընդհանուր կրթական մրադրի, համաձայն Օսմանական Հայրենիքին քաղաքական, տնտեսական և զորքացական նոր պայմաններուն:

(Սոյն կրթական Ընդհանուր մրադրը պէտք է ըստ կարելւոյն գոհացնէ Մայրաքաղաքի և գաւառի բոլոր դպրոցական հաստատութեանց ընդհանուր պէտքերը, իրաւասութիւն տալով պատկանեալ մարմիններուն տեղական պահանջանք համաձայն առաջարկութիւններ ներկայացնելու կեղրօնական իշխանութեան):

ԺԱ. — Բարեկարգութիւն կրթական պաշտօնէից վիճակին:

ԺԲ. — Հաստատել վարժապետանոցներ, ազգային դաստիարակութեան միօրինակ ուղղութիւն մը տալու կարողութեանցիչներ և ուսուցչութիւնը պատրաստելու համար:

ԺԳ. — Հաստատել գիշերային և ցերեկեայ ձրի դասախոսութիւններ՝ մասնաւորապէս վարժարան յաճախէ չկրցող չափահաս գիւղացւոց համար:

ԺԴ. — Հաստատել Հայ Գրական կաճառ մը, որ նպատակ ունենայ Հայ լեզուին և հնախօսութեան մշակութիւնը և Հայ Դպրոցականաց զարգացումը:

ԴԱՏԱԿԱՆ

ԺԵ. — Առանձնական և ամուսնական դատաւարական միօրինակ

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒՅՆ ԿԱՆԽԱՎԺԱՐՈՎ ՈՐ

